ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 09-ի հերթական նիստի.

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Էմմա Գասպարյանը, Արշակ Սրապյանը, Պավլիկ Պապինյանը, Սերյոժա Սարդարյանը, Արմենուհի Ոսկանյանը, Արայիկ Քոչարյանը, Բյուրեղիկ Պողոսյանը, Աշոտ Անտինյանը, Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը, Թիանա Բոջուկյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայող ավագանու անդամներ չկան

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 11.05-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 5-8-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու, հողամասերը ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու, աճուրդային և մրցութային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպչի) գործունեության կանոնակարգը հաստատելու մասին:

6. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրում ,,Նոր քար,, ՍՊԸ-ի կողմից իրականացվող երկրաբանական ուսումնասիրություններին նախնական համաձայնություն տալու մասին:

7. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակչուհի Լուսաբեր Սահակյանի 1988թ-ի դեկտեմբերի 7-ի դրությամբ ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

8. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

Կողմ՝ 15 ձայների համաձայնությամբ որոշումների նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Կողմ՝ 15, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 09-ի թիվ 03 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. . Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ,,Փամբակ կոմունալ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ,,Փամբակ կոմունալ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ,,Փամբակ կոմունալ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու, հողամասերը ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու, աճուրդային և մրցութային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպչի) գործունեության կանոնակարգը հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրում ,,Նոր քար,, ՍՊԸ-ի կողմից իրականացվող երկրաբանական ուսումնասիրություններին նախնական համաձայնություն տալու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

7. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակչուհի Լուսաբեր Սահակյանի 1988թ-ի դեկտեմբերի 7-ի դրությամբ ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

8. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ,,Փամբակ կոմունալ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականություններն իրականացնող Ռաիսա Մինասյանը:

Նիստ վարողը ներկայացրեց ,,Փամբակ կոմունալ,, ՀՈԱԿ-ի ստեղծման անհրաժեշտությունը: Փամբակ խոշորացված համայնքը իր մեջ ներառում է Դեբետ, Վահագնի և Եղեգնուտ բնակավայրերը, որոնք մինչև խոշորացումը մասնակցել են աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ներդրման բարեգործական ծրագրին, որն իրականացվում է ,,Հայաստանի մանուկներ,, բարեգործական հիմնադրամի՝ COAF-ի նախաձեռնությամբ: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել աղբատար մեքենա, նախատեսվել է նշված բնակավայրերում տեղադրել աղբարկներ և իրականացնել աղբահանություն: Նշված գոյքերը նվիրաբերելու համար անհրաժեշտ է ստեղծել ՀՈԱԿ, որը կկազմակերպի ամբողջ համայնքի կոմունալ բնագավառի գործունեությունը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ . Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ,,Փամբակ կոմունալ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականություններն իրականացնող Ռաիսա Մինասյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ,,Փամբակ կոմունալ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականություններն իրականացնող Ռաիսա Մինասյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու, հողամասերը ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու, աճուրդային և մրցութային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպչի) գործունեության կանոնակարգը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի հողաշինարարի պարտականություններն իրականացնող Արտակ Օհանյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրում „Նոր քար„ ՍՊԸ-ի կողմից իրականացվող երկրաբանական ուսումնասիրություններին նախնական համաձայնություն տալու մասին:

- զեկուցեց համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը, նշեց որ համայնքի Վահագնաձոր բնակավայրում 2022թ-ի փետրվարի 4-ին անց են կացվել հանրային լսումներ, որին մասնակցել են վարչական ղեկավարը և բնակիչները՝ ովքեր չեն առարկում երկրաբանական ուսումնասիրություններ անց կացնելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակչուհի Լուսաբեր Սահակյանի 1988թ-ի դեկտեմբերի 7-ի դրությամբ ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը, նշեց որ Վահագնիի բնակչուհի Լուսաբեր Սահակյանը նախկինում հաշվառված է եղել բնակարանով անապահով անձանց ցուցակում, ինչ-ինչ պատճառներով դուրս է մնացել ցուցակից, դիմել է դատարան իր իրավունքները վերականգնելու համար, առկա են հիմքերը, դատարանին անհրաժեշտ է ավագանու որոշում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - «Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2022 թվականի մարտի 02-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:

Փամբակի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2022 թվականի մարտի 02-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Ս. ԱՆԱՆՅԱՆ

Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ա. ՍՐԱՊՅԱՆ

Պ. ՊԱՊԻՆՅԱՆ

Բ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ԱՆՏԻՆՅԱՆ

Ս. ՍԱՐԴԱՐՅԱՆ

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

Շ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ս. ՄԱՐԱՆԴՅԱՆ

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ. ԲՈՋՈՒԿՅԱՆ

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Փամբակ համայնք
Փամբակի համայնքապետարան, հեռ. 077758863

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09» Փետրվարի 2022 թվականի N 09-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 09-Ի ԹԻՎ 03 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի և 16-րդ հոդվածի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի փետրվարի 09-ի թիվ 03 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

,, 09 ,, փետրվարի 2022թ-ի թիվ 03 հերթական նիստի

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ,,Փամբակ կոմունալ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ,,Փամբակ կոմունալ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ,,Փամբակ կոմունալ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու, հողամասերը ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու, աճուրդային և մրցութային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպչի) գործունեության կանոնակարգը հաստատելու մասին:
5. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրում ,,Նոր քար,, ՍՊԸ-ի կողմից իրականացվող երկրաբանական ուսումնասիրություններին նախնական համաձայնություն տալու մասին:
6. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակիչ Լուսաբեր Սահակյանի ընտանիքը բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող ընտանիքների ցուցակում ընդգրկելու մասին:
7. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

ԿՈՂՄ՝ 15 ԴԵՄ՝ 0 ՁԵՌՆՊԱՀ՝ 0

Անանյան Սամվել

Անտինյան Աշոտ
Բոջուկյան Թիանա
Գասպարյան Էմմա
Խաչատրյան Սևակ
Կոստանդյան Սուրեն
Հակոբյան Շուշանիկ
Հարությունյան Նաիրա
Մարանդյան Սասուն
Ոսկանյան Արմենուհի
Պապինյան Պավլիկ
Պողոսյան Բյուրեղիկ
Սարդարյան Սերյոժա
Սրապյան Արշակ
Քոչարյան Արայիկ

Համայնքի ղեկավար **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Փամբակ համայնք
Փամբակի համայնքապետարան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09» Փետրվարի 2022 թվականի N 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ „ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ„ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հիմնադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի „Փամբակ կոմունալ„ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հիմնարկը հաշվառելու նպատակով սահմանված կարգով դիմել իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Մ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

ԿՈՂՄ՝ 15 ԴԵՄ՝ 0 ՁԵՌՆՊԱՀ՝ 0

Անանյան Սամվել
Անտինյան Աշոտ
Բոջուկյան Թիանա
Գասպարյան Էմմա
Խաչատրյան Սևակ
Կոստանդյան Սուրեն
Հակոբյան Շուշանիկ
Հարությունյան Նաիրա
Մարանդյան Սասուն
Ոսկանյան Արմենուհի
Պապինյան Պավլիկ
Պողոսյան Բյուրեղիկ
Սարդարյան Սերյոժա
Սրապյան Արշակ
Քոչարյան Արայիկ

Համայնքի ղեկավար ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Փամբակ համայնք
Փամբակի համայնքապետարան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09» Փետրվարի 2022 թվականի N 11-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ,,ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ,,Փամբակ կոմունալ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

ԿՈՂՄ՝ 15 ԴԵՄ՝ 0 ՁԵՌՆՊԱՀ՝ 0

Անանյան Սամվել
Անտինյան Աշոտ
Բոջուկյան Թիանա
Գասպարյան Էմմա
Խաչատրյան Սնակ
Կոստանդյան Սուրեն
Հակոբյան Շուշանիկ
Հարությունյան Նաիրա
Մարանդյան Սասուն
Ոսկանյան Արմենուհի
Պապինյան Պավլիկ
Պողոսյան Բյուրեղիկ
Սարդարյան Սերյոժա
Սրապյան Արշակ
Քոչարյան Արայիկ

Համայնքի ղեկավար ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված թիվ 1
ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի
ավագանու 2022 թվականի
փետրվարի 09-ի 11-Ա որոշմամբ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գ. Փամբակ
2022թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի տնտեսությունը սպասարկելու նպատակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

1.2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), ի դեմս համայնքի ավագանու, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավարը:

1.3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքներով, այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով, հիմնադրի, համայնքի ղեկավարի որոշումներով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն):

1.4. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

1.5. Կազմակերպությունը ունի ՀՀ զինանշանի պատկերով և հայերեն անվանմամբ կլոր կնիք և անհատականացման այլ միջոցներ:

1.6. Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.7. Կազմակերպությունը ձեռք է բերում և իրականացնում Կանոնադրությամբ ամրագրված գործառույթներ, ստանձնում է անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

1.8. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.9. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության պարտավորությունների համար:

1.10. Կազմակերպության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, գ. Վահագնի 2 փող. 1 շ., փոստային դասիչ՝ 2040:

1.11. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.12. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.13. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.14. Կազմակերպությունն իր կանոնադրական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք է բերում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

1.15.Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը Փամբակ համայնքի վարչական տարածքի բոլոր բնակավայրերի սահմաններում կոմունալ տնտեսության բնագավառում ծառայությունների մատուցումն է, որն ապահովելու նպատակով Կազմակերպությունը իրականացնում է հետևյալ գործառույթները՝
ա) իրականացնում է համայնքի վարչական տարածքում բարեկարգման աշխատանքներ.
բ) կատարում է աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ, ինչպես նաև կարող է իրականացնել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ լիազորություններ.
գ) իրականացնում է համայնքի ուղևորափոխադրման գործունեություն.
դ) կատարում է համայնքի ձմեռային պաշտպանության համար անհրաժեշտ աշխատանքներ.
ե) կազմակերպում է հանգստի հանրային վայրերի խնամքը և պահպանությունը.
զ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող գործունեություն, որը պետք է բխի համայնքի շահերից:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1. Կազմակերպության կառուցվածքը որոշում է կազմակերպության հիմնադիրը:
3.2. Կազմակերպությունը աշխատանքներն իրականացնում է հաստիքային անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում կազմակերպության որակի համար:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, նրա լիազորած մարմինը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար), գործադիր մարմինը (այսուհետ՝ Կազմակերպության տնօրեն):
4.2. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
4.3. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա) ավագանու համաձայնությամբ Կազմակերպության հիմնադրումը.

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
գ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.
դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.
ե) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.
զ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.
է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
4.4. Համայնքի ղեկավարն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.5. Համայնքի ղեկավարը՝
ա) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը.
գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.
դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.
ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.
զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համայնքի ավագանու որոշմամբ համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.
ը) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

4.6. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ Կազմակերպության տնօրենը, ով աշխատանքի նշանակվում և ազատվում է ՀՀ օրենսդրության համաձայն:
Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի որոշումներով, Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի

որոշումների, Կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4.7. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը, համայնքին և (կամ) պետությանը պատճառված վնասի համար: Կազմակերպության տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:
4.8. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:
4.9. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) օրենսդրությամբ, Հիմնադրի և Համայնքի ղեկավարի որոշումներով և Կազմակերպության Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր:
դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:
ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ:
զ) սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու աշխատակիցների իրավասությունները:
է) օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:
ը) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը:
թ) կազմում է Կազմակերպության հաստիքային ցուցակի նախագիծը ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում է Հիմնադրի հաստատմանը:
ժ) տնօրենի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի գրավոր որոշման համաձայն նրա լիազորությունները իրականացնում է այլ անձ:
ի) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

5.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր Կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

5.3. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ Հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

5.4. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

5.5. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող ցանկացած գույք:

5.6. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

5.7. Կազմակերպությունն իր գործառույթներն արդյունավետ կազմակերպելու նպատակով իրավունք ունի վարձակալելու ցանկացած գույք:

5.8. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ Կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավել՝ բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են: Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

5.9. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

5.10. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

5.11. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) Հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած միջոցները.

բ)իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների տրամադրած դրամաշնորհները և նվիրատվությունները:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

5.12. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը, ինչպես նաև օրենքով նախատեսված պետական կառավարման մարմինները: Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Կազմակերպությունն իրավունք ունի իրականացնել միայն այնպիսի գործունեություն, որը նպատակաուղղված է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելուն, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովելուն:

6.2. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է հետևյալ նպատակներով՝

ա) հիմնական միջոցների ձեռքբերման ճանապարհով Կազմակերպության նյութատեխնիկական համալրում,

բ)Կազմակերպության աշխատանքային գործունեությունն ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում,

գ) Կազմակերպության աշխատակիցների պարգևատրումներ և հավելավճարներ,

դ) Կազմակերպության աշխատակիցների որակավորման բարձրացում:

6.3. Կազմակերպության շահույթն օգտագործվում է Համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանված կարգով:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Փամբակ համայնք
Փամբակի համայնքապետարան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09» Փետրվարի 2022 թվականի N 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ „ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ„ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի „Փամբակ կոմունալ„ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

ԿՈՂՄ՝ 15 ԴԵՄ՝ 0 ՁԵՌՆՊԱՀ՝ 0

Անանյան Սամվել
Անտինյան Աշոտ
Բոջուկյան Թիանա
Գասպարյան Էմմա
Խաչատրյան Սևակ
Կոստանդյան Սուրեն
Հակոբյան Շուշանիկ
Հարությունյան Նաիրա
Մարանդյան Սասուն
Ոսկանյան Արմենուհի
Պապինյան Պավլիկ
Պողոսյան Բյուրեղիկ
Սարդարյան Սերյոժա
Սրապյան Արշակ
Քոչարյան Արայիկ

Համայնքի ղեկավար ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի
Փամբակ համայնքի ավագանու
2022թ. փետրվարի 09-ի N 12-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ,,ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 14 :

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հապտիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴ
1	Տնօրեն	1	200 000	200 000
2	Հաշվապահ	1	160 000	160 000
3	Գործավար	1	140 000	140 000
4	Վարորդ	6	110 000	660 000
5	Մեխանիզատոր	2	105 000	210 000
6	Բանվոր	3	100 000	300 000
	Ընդամենը	14	815 000	1 670 000

Համայնքի ղեկավար ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Փամբակ համայնք
Փամբակի համայնքապետարան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09» Փետրվարի 2022 թվականի N 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Փամբակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու, հողամասը ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու, աճուրդային և մրցութային հանձնաժողովի /աճուրդի կազմակերպչի/ գործունեության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

ԿՈՂՄ՝ 15 ԴԵՄ՝ 0 ՉԵՌՆՊԱՀ՝ 0

Անանյան Սամվել
Անտինյան Աշոտ
Բոջուկյան Թիանա
Գասպարյան Էմմա
Խաչատրյան Սևակ
Կոստանդյան Սուրեն
Հակոբյան Շուշանիկ
Հարությունյան Նաիրա
Մարանդյան Սասուն
Ոսկանյան Արմենուհի
Պապինյան Պավլիկ
Պողոսյան Բյուրեղիկ
Սարդարյան Սերյոժա
Սրապյան Արշակ
Քոչարյան Արայիկ

Համայնքի ղեկավար ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Փամբակ համայնքի ավագանու
2022 թվականի փետրվարի 09-ի թիվ 13-Ա որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՀ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի (հետագայում՝ գույք) աճուրդի միջոցով օտարման հողամասերը ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու, մրցութային և աճուրդային հանձնաժողովի գործունեության կանոնները:
2. Աճուրդի, ուղղակի վաճառքի և վարձակալության /կառուցապատման իրավունքի/ կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը՝ ի դեմս համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 09-ի « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդային և վարձակալության/կառուցապատման իրավունքով/ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 52-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովը:
3. Հանձնաժողովը ղեկավարվում է «Հրապարակային սակարկությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ ապահովումը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, azdarar.am կայքում, ինչպես նաև հայտարարությունները տեղադրել ինտերնետային պաշտոնական և ֆեյսբուքյան էջերում: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու փետրվարի 09-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու, հողամասերը ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու, աճուրդային և մրցութային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպչի) գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 13-Ա որոշմամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

II. ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Աճուրդը անցկացնել սակարկությունների ձևով, որի ընթացքում հաղթող ճանաչել այն մասնակցին, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:
5. Աճուրդը անցկացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում՝ համայնքապետարանի շենքում (Հասցե՝ գյուղ Փամբակ 1փող. շենք 23):

6. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է նվազագույնը 2000 տպաքանակ ունեցող մամուլում ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ և ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կարգը՝ պաշտոնական ծանուցումների ապահովումը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, azdarar.am կայքում, ինչպես նաև հայտարարությունները տեղադրել ինտերնետային պաշտոնական և ֆեյսբուքյան էջերում՝ աճուրդի կայացման օրվանից առնվազը 30 օր առաջ:
7.Աճուրդի հրապարակային ծանուցման մասին հայտարարությունը աճուրդի անցկացման վայրում և համայնքի մարդաշատ այլ վայրերում տեղադրվում է աճուրդի կայացման օրվանից առնվազն 15 օր առաջ: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ տեղադրվում է աճուրդի կայացման վայրում:
8. Հրապարակային սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:
9. Հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել՝
1) աճուրդային հանձնաժողովի անդամները (աճուրդի կազմակերպիչ),
2) համայնքի ավագանու անդամները
3) աճուրդավարի երեխաները, ծնողները, ամուսինները, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը:
10 Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանել ավագանու որոշման համաձայն հաստատված դրույքաչափով:
11. Աճուրդին կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այլ անձինք (հետագայում դիտորդ) ովքեր վճարել են մուտքի տոմսի վճարը:
12. Դիտորդների համար մուտքի տոմսի վճարի չափը սահմանվում է համայնքի ավագանու որոշմամբ սահմանված աճուրդի մասնակցության վճարի չափով:
13.Աճուրդի մասնակիցները և Դիտորդները, աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:
14. Աճուրդի մասնակիցները և դիտորդները, պարտավոր են չխոչնդոտել աճուրդին
1) չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաճողովի կամ աճուրդավարի նկատմամբ.
2) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն պայմաններով սահմանված դեպքերի,
3) հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովի նախագահին լոտի աճուրդը

սկսելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

4) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ,

5) չթաքցնել աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

15 Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

16. Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, գումարով, որի վճարումից հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է Աճուրդի «մասնակցի վկայական»:

17. Աճուրդի կանխավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպիչին:

18. Աճուրդում հաղթած է համարվում աճուրդի այն մասնակիցը, ով աճուրդավարի մուրճիկի երրորդ հատվածից հետո ներկայացրել է ամենաբարձր գնային հայտը:

19.Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետ է սահմանվում աճուրդի մասին հրապարակայի ծանուցման օրվանից մինչև աճուրդի օրը;

20. Աճուրդը սկսվելուց մեկ ժամ առաջ աճուրդային հանձնաժողովը (աճուրդի կազմակերպիչ) իր նիստում գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը և իր որոշմամբ թույլատրում է մասնակցել աճուրդին:

21.Աճուրդի արդյունքների մասին աճուրդի անցկացնելու օրը կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են աճուրդային հանձնաճողովի ներկա անդամները և աճուրդի հաղթող մասնակիցը:

22. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ առք ու վաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

23. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է աճուրդի կայացման օրվանիվ հետո 10-օրյա ժամկետում:

24.Գույքի ամբողջ գնի վճարումը գնորդի կողմից կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

25. Սահմանված ժամկետներում առք ու վաճառքի պայմանագիրը չկնքելու և /կամ/ գույքի գինը չվճարելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքային բյուջե:

26. Գույքի առք ու վաճառքի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից:

27. Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

28. Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են Փամբակի համայնքապետարանում՝ աճուրդային հանձնաժողովի կողմից:

29. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝
1) հայտ՝ սահմանված ձևանմուշով,
2) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,
3) իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցիչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,
4) նախավճարի մուծման անդորագիրը:
30. Աճուրդում վաճառված գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:
31. Աճուրդը համարվում է չկայացած եթե,
1) Աճուրդին ներկայացել է միայն մեկ գնորդ կամ չի ներկայացել որևէ գնորդ:
2) աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել:
3) աճուրդում հաղթած անձը չի մուծել գնման գինը:
32. Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդային հանձնաժողովի որոշմամբ՝ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:
33. Աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է չկայացած աճուրդից ոչ ուշ քան 10 օրացույցային օր հետո: Կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է աճուրդային հանձնաժողովը՝ սույն կանոնակարգի և /կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:
34.Վերոհիշյալ կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքած պայմանագրի անվավերության:
35. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

III. ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

36. Աճուրդային հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:
37.Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների սահմանված թվի կեսից ավելին:
38. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կեսից ավելին:
39. Աճուրդավարը և արձանագրողը հաստատվում են համայնքի ավագանու կամ աճուրդային հանձնաժողովի որոշմամբ:
40. Աճուրդային հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝ աճուրդը կայացած ճանաչվելու, աճուրդի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և համայնքի ղեկավարին աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

IV.ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ

41.Հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է՝
ա/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում, ինչպես նաև էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների /շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ/ կառուցապատման համար հողամասերի տրամադրման դեպքում.
բ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ բնակելի շենքերը, շինությունները բնակելիի վերափոխելու արդյունքում ձևավորված բնակելի տների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերն օտարելիս.
գ/ գոյություն ունեցող բնակելի, հասարակական, արդյունաբերական և այլ նշանակության օբյեկտների, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման համար, եթե հնարավոր չէ լրացուցիչ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով:
42.Հողամասերի ուղղակի վաճառքի գինը սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հողամասերի, որոնք օտարվում են հողամասի՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:

V.ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

43.Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-81-րդ հոդվածներին համապատասխան՝ հողամասը վարձակալության է տրամադրվում ժամանակավոր օգտագործման համար:
Հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարվանից ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի:
44. Հողամասերը վարձակալության տրամադրվում են մրցույթով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
45. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է՝
ա/Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին,
բ/Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձանց,
գ/օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց,
Հայաստանի Հանրապետության կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց,
դ/ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպություններին:
46.Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է հետևյալ նպատակներով՝

ա/ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու,
բ/ ընդհանուր օգտագործման տարածքները /զբոսայգիներ, պուրակներ, ավտոկայանատեղեր/՝ դրանց նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու,
գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության պայմանագրերի գործողության ընթացքում կամ դրանց գործողության ժամկետներն ավարտվելուց հետո վարձատուի կողմից պայմանագրերի ժամկետները՝ հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետներով երկարացվելու դեպքում:
47.Վարձակալության իրավունքով տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա կարող են կառուցվել միայն գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր և շինություններ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերին համապատասխան:
48.Հողամասերի կառուցապատման իրավունքը տրամադրվում է միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված նորմերին և կանոններին համապատասխան՝ մրցույթային կարգով՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝
ա/ մինչև 20քառ.մետր մակերեսով ավտոտնակների, կրպակների, առևտրի կետերի և սպասարկման այլ օբյեկտների համար.
բ/ տրամադրված հողամասերի ընդլայնման անհրաժեշտության դեպքում, եթե լրացուցիչ տրամադրվող հողամասը հնարավոր չէ որպես առանձին միավոր տրամադրել մրցույթային կարգով.
գ/ բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համա.
դ/ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ինչպես նաև ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների /շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ/ կառուցման համար.
ե/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասի մի մասի այլ հողօգտագործողի տրամադրելու դեպքում՝ նախկին հողօգտագործողի իրավունքները սահմանված կարգով դադարեցվելուց հետո.
զ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց կամ քաղաքացիներին օգտագործման իրավունքով տրամադրված հողամասերը կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ փոխանակման անհրաժեշտություն առաջանալիս.
է/ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի ներկայացմամբ:

49. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար համայնքի ղեկավարների կողմից ստեղծվում է մրցութային հանձնաժողով:
50. Մրցույթները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ, 78-րդ, 79-րդ և 80-րդ հոդվածներով սահմանված կարգով:
51. Մրցութային հանձնաժողովը ստեղծվում են համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որոնց կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետներ, ավագանու անդամներ և համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ:
52. Մրցույթային հանձնաժողովը հրապարակում է մրցույթի պայմանները, որոնք պետք է ներառեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված պահանջները:
Մրցույթային հանձնաժողովը կարող է սահմանել նաև այլ լրացուցիչ պահանջներ և պայմաններ:
53. Կառուցապատման իրավունքի տրամադրման դեպքում մրցույթի պայմանները նշվում են նաև քաղաքաշինական նորմերին, կառուցապատման պայմաններին և քաղաքաշինական սահմանափակումներին վերաբերող հետևյալ լրացուցիչ պայմանները՝
ա/ հողամասի նկարագրությունը /կողմնորոշումը, թեքությունը, բարեկարգման վիճակը, հաղորդակցուղիների և իրացման ենթակա կառույցների առկայությունը/.
բ/ կառույցի /կառույցների/ հարկայնությունը, մոտավոր տեղադրումը հատկացվող հողամասում, կառուցապատման տոկոսը.
գ/ շինարարության սկզբի և ավարտի ժամկետները.
դ/ տարածքի բարեկարգմանը, պահպանմանն ու սպասարկմանը ներկայացվող պահանջները:
54. Զբոսայգիների, պուրակների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման այլ տարածքների վարձակալության կամ կառուցապատման իրավունքի մրցույթի պայմաններում նշվում են նաև՝
ա/կանաչապատ մակերեսի հարաբերությունը կառուցապատված /անջրանցիկ/ մակերեսին /փաստացի և հեռանկարային/.
բ/տարածքի այլ սեփականատերերի և օգտագործողների տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի միավորների, դրանց առկայությամբ պայմանավորված սահմանափակումների և սերվիտուտների մասին տեղեկությունները.
գ/ նշված տարածքում բնակչության հանգիստը կազմակերպելու նպատակով կառուցապատում իրականացվելու դեպքում թույլատրվող օբյեկտների շրջանակը:
55.Մրցույթների անցկացման փաթեթում ներառվում են ինչպես վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի նախագիծը, այնպես էլ մրցույթով տրամադրվող հողամասի հատակագծի նախագիծը՝ որպես պայմանագրի նախագծի հավելված:
Կառուցապատման իրավունքի տրամադրման դեպքում փաթեթում ներառվում է նաև մրցույթի պայմաններով նախատեսված՝ քաղաքաշինական նորմերի և

սահմանափակումների, կառուցապատման պայմանների հիման վրա սահմանված կարգով կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը:
Մրցույթի անցկացման փաստաթղթերի նախագծերի տրամադրումը վճարովի է:
Մրցույթի կազմակերպիչը մրցույթի արդյունքների ամփոփումից հետո 10-օրյա ժամկետում հաղթողին տրամադրում է լիազոր մարմնի որոշումը, կառուցապատման կամ վարձակալության իրավունքի համար տրամադրվող պայմանագիրը, հողամասի հատակագիծը, իսկ կառուցապատման իրավունքի տրամադրման դեպքում նաև ճարտարապետահատակագծային առաջադրանքը:
56. Մրցույթի արդյունքներն ամփոփելիս և հաղթողին որոշելիս՝ մրցույթային հանձնաժողովի հաշվի է առնում առաջարկվող վարձավճարի /վճարի/ չափը:
Առանձին դեպքերում կարող են հաշվի առնվել նաև՝
ա/բիզնես ծրագիրն ու հողամասի օգտագործման տեխնիկատնտեսական հիմնավորումները.
բ/ հողերի բարելավման, կուլտուր-տեխնիկական միջոցառումների իրականացման, նոր հողերի յուրացման, բնապահպանական և պատմամշակութային միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունները.
գ/ արտադրության կազմակերպման, քաղաքաշինական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը, օբյեկտի կարճ ժամանակում կառուցման և շահագործման հնարավորությունը.
դ/ հողամասի ռացիոնալ օգտագործման երաշխիքները համայնքի, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման, ազատ աշխատուժի օգտագործման նախատեսումը.
ե/ համայնի, մարզի մշտական բնակիչ լինելու կամ իրավաբանական անձի գրանցման հանգամանքը:
57. Մրցույթային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ:
Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի անդամների, մրցույթում հաղթողի, ցանկության դեպքում՝ նաև մրցույթի մասնակիցների կողմից:
Մրցույթի հաղթողին որոշելիս՝ առաջացած հարցերը նշվում են արձանագրության մեջ՝ որպես հատուկ կարծիք:
Արձանագրության մեջ նշվում են մրցույթի հաղթողի տվյալները, հողամասի վարձակալության ժամկետները, հողամասի և վարձավճարի /վճարի/ չափերը, հողամասի օգտագործման նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի օգտագործման պայմանները, մրցույթի հաղթողին տրվող իրավունքները, ինչպես նաև մրցույթում սահմանված մյուս պայմանները:
58. Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը և /կամ/ հողամասի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի պայմանագիրն ստորագրելուց հրաժարվելու դեպքում զրկվում է մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու /կառուցապատման իրավունք ձեռք բերելու/ իրավունքից:
Եթե կրկնամրցույթը չի կայանում մեկ հայտ ներկայացված լինելու պատճառով, ապա հողամասը կարող է առանց մրցույթի 10-օրյա ժամկետում տրամադրվել է առաջին

հերթին հայտը ներկայացնողին, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ հողամասը կարող է տրամադրվել նոր մրցույթ հայտարարելով:

59. Տրամադրված հողամասի դիմաց գանձվող վարձավճարի /վճարի/ չափը և վճարման պայմանները սահմանվում են պայմանագրով՝ մրցույթի արդյունքների հիման վրա:

60. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար կազմվում է հողաշինարարական գործ, որում ներառվում են մրցույթի պայմաններով նախատեսված փաստաթղթերը:

61. Մրցույթների արդյունքների հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Փամբակ համայնք
Փամբակի համայնքապետարան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09» Փետրվարի 2022 թվականի N 14-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ "ՆՈՐ ՔԱՐ" ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Վահագնաձոր բնակավայրում 04.02.2022թ-ին անց կացված հանրային լսումների արձանագրությունը, Փամբակ համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Տալ նախնական համաձայնություն ,,Նոր Քար,, ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով Փամբակ համայնքի Վահագնաձորի երևակումում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար:

Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

ԿՈՂՄ՝ 15 ԴԵՄ՝ 0 ՁԵՌՆՊԱՀ՝ 0

Անանյան Սամվել
Անտինյան Աշոտ
Բոջուկյան Թիանա
Գասպարյան Էմմա
Խաչատրյան Սևակ
Կոստանդյան Սուրեն
Հակոբյան Շուշանիկ
Հարությունյան Նաիրա
Մարանդյան Սասուն
Ոսկանյան Արմենուհի
Պապինյան Պավլիկ
Պողոսյան Բյուրեղիկ
Սարդարյան Սերյոժա
Սրապյան Արշակ
Քոչարյան Արայիկ

Համայնքի ղեկավար ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Փամբակ համայնք
Փամբակի համայնքապետարան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09» Փետրվարի 2022 թվականի N 15-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀԱԳՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԼՈՒՍԱԲԵՐ ՍԱՀԱԿՅԱՆԻ 1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՓԱՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ կառավարության 13.11.2008թ-ի ,,Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին,, թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 9.1 կետը, Վահագնի բնակավայրի բնակչուհի Լուսաբեր Սահակյանի 07.02.2022թ-ի դիմումը, հարևանների վկայությունը , Վահագնիի համայնքապետարանում առկա Լուսաբեր Սահակյանի ընտանքի վերաբերյալ առկա փաստաթղթային փաթեթը, Փամբակ համայնքի ավագանին հիմք ընդունելով վերը նշվածը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի բնակչուհի Լուսաբեր Սահակյանի դիմումը բավարարել, հաստատել այն փաստը, որ Լուսաբեր Սահակյանի ընտանիքը ունեցել է բնակելի տուն Վահագնի համայնքում /ներկա պահին հասցեն՝ Փամբակ համայնք գ. Վահագնի 1 փող. 2 տ/, որը քանդվել է երկրաշարժի հետևանքով, իսկ նրա ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի դրությամբ բաղկացած է եղել 3 անձից՝

ինքը՝ Լուսաբեր Բենիկի Սահակյան ծնված 23.04.1965թ.
ամուսինը՝ Ֆրունզիկ Ֆեոդորի Սահակյան ծնված 12.10.1962թ.
որդին՝ Միեր Ֆրունզիկի Սահակյան ծնված 13.12.1988թ.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

ԿՈՂՄ՝ 15 ԴԵՄ՝ 0 ՁԵՌՆՊԱՀ՝ 0

Անանյան Սամվել
Անտինյան Աշոտ
Բոջուկյան Թիանա
Գասպարյան Էմմա
Խաչատրյան Սևակ
Կոստանդյան Սուրեն
Հակոբյան Շուշանիկ
Հարությունյան Նաիրա
Մարանդյան Սասուն
Ոսկանյան Արմենուհի
Պապինյան Պավլիկ
Պողոսյան Բյուրեղիկ
Սարդարյան Սերյոժա
Սրապյան Արշակ
Քոչարյան Արայիկ

Համայնքի ղեկավար ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Փամբակ համայնք
Փամբակի համայնքապետարան, հեռ. 077758863

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09» Փետրվարի 2022 թվականի N 16-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2022թ-ի մարտի 02-ը ժամը 13.00:

Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

ԿՈՂՄ՝ 15 ԴԵՄ՝ 0 ՁԵՌՆՊԱՀ՝ 0

Անանյան Սամվել
Անտինյան Աշոտ
Բոջուկյան Թիանա
Գասպարյան Էմմա
Խաչատրյան Սևակ
Կոստանդյան Սուրեն
Հակոբյան Շուշանիկ
Հարությունյան Նաիրա
Մարանդյան Սասուն
Ոսկանյան Արմենուհի
Պապինյան Պավլիկ
Պողոսյան Բյուրեղիկ
Սարդարյան Սերյոժա
Սրապյան Արշակ
Քոչարյան Արայիկ

Համայնքի ղեկավար **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**